



## ՀԵՆԴԻ ԿԻՒՇՄԱՆ

ՎԻՊԱՌԱՆԱԿԱՆ, ԱՋԱԽԵՍԻՑ ԵՒ ՔԻՉԱՓԹԱԿԱՆ, ՆԱՇԵԱՐԿԻ ԵՒ ԶԱԽԱՐԱԿԱՆ.

ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ

Խ. ՏԱՐԵ.

1862 ՓԵՏԵՐՈՒԱՐ 1

Խ. ՏԱՐԵ 3

### ԿԱՐԵՒՈՐ ՖԱՆՈՒՑՈՒՄ

Յաւերժահարսը ընթերցողներէն ոմանք Ազգային կ'ուզեն, ոմանք Օռուարձալիք, և ոմանք վիալասանական, և վերջապէս ոմանք ալ կը խընդրեն, ինչպէս որ մեղ ուղղուած նամակներէն շատերը կը վկայեն, որ Վրուեսակց վրայօք խօսիմք պարզ և հասկանալի ոճով:

Այս պարագ աներուս մէջ չեմք գիտեր նախ և առաջ որուն կամքը կատարեմք, և թէ որ ուղեմք որ այս տեսակ տեսակ ախորժակի տէր ընթերցասիրաց առնուն մէկէն փափաքածը ընեմք, տեղերնիս չեպիտի ներէ. և մեր առանել լապէս բաղձացածնալ առ այժմ ազդին նիւթականին առաւել օդնել ըլլալուն, և տեսնելով որ արդեամբք ազգերնուս մէջ գործ չունեցողները ու փուռ ժուռ եկողները շատեն, և նպատակնիս ալ իրենց օդատին ծառայել է, վանաորոյ պիտի աշխատիմք մասնաւորապէս զանազան արուեստներու վրայ՝ խօսիլ:

որ իրենց տանէ պիտանեգոյնն է. և այս այնպիսի լեզուով մը, որ իրենց փափաքածին համեմատ, ամենէ ցած քանաւոր ուամիկը իսկ մեր զրածները իմանայ. ուրեմն թող ներուի մեղ ըսելու, թէ մեր այս արուեստական նիւթոյ մէջ զործածելու ու ձերնիս պիտի ըլլայ, ոչ թէ պարզ աշխարհաբար, այլ նաև ՚ի պահանջնել հարկին թէ Տաճկերէն և թէ ուրիշ օտարազգի լեզուներով խառն բառեր ալ զործածելով, և թէ որ գարձեալ մեր արուեստաւորները կամ արուեստակէտները մեր հրատարակածները իմանալու գժուարութիւնն իրեն, այն ժամանակ Յաւերժահարսը պատրաստ է կամ բերնով կամ նամակով հաղորդելու իրենց գժուար երեցած պարբերութեանց բացայայտութիւնը. և մինչեւ զործականը իսկ անձամբ իրենց սորվեցնելու: Եթէ ըսողներ զանուին “Օքազ իրները մեր փորը չեն կշտացներ, իւշ պր-ը-ու-լը եօլըն պատուլը”, այն ժամանակ մենք այս ըսողներուն կ'աղաչեմք որ եթէ Յաւերժահարսը միայն վեց ամիս շարունակ

կարդան, անշուշտ անանկ կարեռ և օդտակար բաներու պիտի պատահէին, որոնց մէջ հաւասարի եմք, իւշաւ-շ-շ-շ- եօլ ընկ էօյէնկ ոկէրէր:

### ՊՈԶԷԼԻ ՏԵ ՏԵ ԳԱԲԵՎԵԼԼ

#### Ը առողջականիւն և վէր (1):

Ապասաւորք արգէն զիտէին անոր ցասման սաստկութիւնը, վասնորոյ զգուշաւոր պատասխաններ տալով անոր հետաքրքրական հարցմանը, հազիւ թէ կրցին ազատել անոր զայրացման ենթակայ լինելը: Տարմէնակ պաշտօնակալը մանրախոյդ հարցումներ ընելով, վերջապէս իմացաւ որ պահապանները և ծառաները երբէք ծանօթութիւն չունէին եղած զործին մէջ: Իր բարկութիւնը ան ասաիձան զրդուցաւ որ պահապանութիւն համար գըրած խոշոր շան վրայ յարձակելով զան խեղեց, քանզի զան իր խոռոչին մէջ քննացած զտաւ:

Տարմէնակին բնակարանը Ա. Պոզոսի թագաւորական արքունեաց քովի էր, որոյ մէկ գուռը կը բայցուէր Ա. Ընտոնի փեղենեայ ըստած գրան վրայ. երեք կողմէն պատնէշներով ամրացած էր, և դետին կողմէն ամուր պարիսպներով, բարձր և անմասչելի աշտարակներով պատսպարուած էր:

Աս պարիսպներուն և աշտարակներուն վրայ խումբ մը քաջ և խոչեմ զինուորներ գրաւ, ու անոնց մահ սպառնալով ճրամայեց որ բաց ՚ի կոմսուհին յերկիր կործանեն այն ամեն անձինքը, որոնք կը համբաձակին պարտիզին Ճամբէն դղեակը ելլել, բայց ինայել որ և իցէ զինուորականի մը կեանքը, որ կ'ուղէ ներս մտնել թէ զիշեր և թէ ցորեկ ատեն, սակայն սպառնեն զայն, երբ կամենայ գուրս ելլել, և սահմանադլուիր անցնել: Կոյն զգուշութիւնները և պատուէրները Ա. Ընտոնի դրան վրայ դրած պահապաններուն ալ տուաւ: Ծառաները մինչեւ անդամ մառանապետը արդիլուած էին մահուան սպառնալեօթ արտաքս ելլելու:

Մինչդեռ Տարմէնակ այս կերպ տնեն կողմէն իր բնակարանը զինուորներով և պահապաններով պատսպարելով՝ Ապահացիին մահուան համար թակարթներ կը լարէր, Պոզէլիս կոմսուհին ևս միւս կողմէն օրհասական երկիւղ կը կրէր իր սիրականին օրհասական վտանգը տեսնելով: Աս վտանգէն ազատելու համար՝ իր մտերիմ Անրողիս խնամածու տիկնոջ հետ խորհուրդ ընելով, որոշեցին որ գը-

ղեակին հնարակէտ լուացարար կնոջ ձեռքովը իւրենց դործը տեսնեն, և իմացընեն Ապահացիին իր առջելը լարուած վտանգը, դպուշացընելով որ իր տեղը մնայ:

Լուացարար կինը բերդապահներուն մէջ սիրահար միւսնէր, և կը կարծէր թէ կարող պիտի ըլլար իւր սիրոյն շնորհիւր դղեակին անցնիւ և տեսութիւն ընել Պոզէլիս կոմսուհոյն սիրական ին հետ: Ապահացի լուացարար կինը բերդին մօտենալով, փուժ տեղը իւր հրապարակ ուղարկելու ողոքանքը և համոցի քաղցրաբան խօսքերը թափեց անոր առջելը, քանզի բերդապահ զինուորը դրապէս մերժեց անոր ինդիրը իր պաշտօնակալ տիրոջը բարկութենէն վախինալով:

Խեղջ լուացարարը իր պատղամաւորութեան անցանողութենէն յուստաբեկ լինելով, կրկին վերագարձաւ կոմսուհոյն կայարանը, և պատմեց անոր իրաց անցանող ելքը:

Անստեն կոմսուհին ուրիշ հնարք մի մտածեց երբ իմացաւ թէ իրեն միայն թոյլատութիւն կայ դղեակին պատնէշներէն անցնելով փոքր գունէն ելլելու և ուղած տեղը երթալու: Ուստի աս համարձակութեարբ Ճամբայ ինկաւ, բայց հաղիւ թէ դըռնէն գուրս ելաւ, երբ չորս ասպետ և երկու զօրապետներ իսկոյն շրջապատեցին զինքը իմացընելով թէ պատուէր տրուած է իրենց թող շտալ զինքը վայրիեան մը անդամ: Դժբաղդ և զեղանին Պոզէլիս յուսակաւուր իր սենեակի վերադարձաւ իր աչքերէն մարդարտանան արտասուքներ թափելով: “Ա՛հ, կ ըսէ հեծկլատանօք, ուրեմն սիրականիս մահուան Ճակատագ իրը կնքուած է, սրաշոնակալին բարկութեան և ցասման կատութիւնը ինձ անծանոթ չէ: Եթէ Ապահացին իր իշխանութեան տակը իշխայ, իր մահը որոշուած է ոչի, բնչապէս պիտի կրնամ համբէրել որ Տարմէնակին անդութ և վըրէ ժինդիր սուրը իր սիրականիս սրտին ամենալաւ արիւնովը ներկուեւ: Անէկ հնարք մը միայն կը տեսնէր, որ է անոր կենաց փոխարէն ուրիշի մը կեանքը զինչել: Թէ ես սովորակը և գտառապարակի պաշտօն մէկ ընելիքս, բայց այսու ամենայնիւ սիրականին կեանքը աղատելու համար պարտաւորած կը սեպեմ ինքունքս:

Ընթերցողք պարտին յիշել թէ այս դէպքը պատահած գարը արիւնուից դար մի էր, մարդկային կեանքը ոչինչ արժէք մի ունէր, բռնական վճիռները ժամանակին հանապազօրեայ գործերն էին, փափկասուն տիկիններն իսկ չէին պատկառեր ոճապ ործութեան ցանկին մէջ արձանադրիլ: Առդ Պոզէլիս տը Պարվէլս ևս աղնուատոհմ շնորհակալիք



Յաւլիան, զոչեց կոմսուհին անոր ստիցը փարելով, ներէ ինձ որ Աալոյացին համար ես զքեղ սիրեցի:

— Ուրեմն ես Աալոյացի Կարոլոսին զոհը պիտի ըլլար:

— Այս է իմ սիրահարս, ըստ կոմսուհին սզալի տրամութեամբ:

— Խարուած ես, ըստ Յուլիան ջերմ անձանօր, խարուած ես բոլորովին. կ'աղաջեմ զքեղ, հաւատամ անանկ մէկու մը խօսքին, որ երբէք սըտութիւն չխօսեցաւ աս աշխարհիս մէջ: Աալոյացի Կարոլոսը քու անունդ նշաւակեց վատ տարգիածուներուն մէջ, ականջով լայցի որ հաճութեամբ շընորհակալ կ'ըլլար Տարմէնակէն, որ քովդ զալուար ելք կ'ըլլար, շատ հող մի ըներ, տիկին, անուրիշ մը հետ ամուսնանալու վրայ է:

— Այդպիսի անօրէնութիւն ընելու յանդըդշնի' Աալոյացին, աղաղակեց Բօղէլիա շանթահար սոսկումով,

— Իմ Ճակատազիրս լրացած է, ով մեծանուն տիկին, խիստ բաղդաւոր եմ որ երեւլի կնոջ մը համար պիտի մեռնիմ, և կ'երգնում որ ես իմ կեանքս սիրով կը ծախեմ, և տակաւին հաճութեամբ կը մեռնիմ, որովհետեւ իմ մահս իմ հոգւստ առարկային հրամանը կատարելն է:

— Յուլիան, զոչեց տիկինը, սիրելի Յուլիան, ես ինչպէս կը ըստ անզայ կրնամ ըլլալ քու հեղահամբոյր բնաւորութեանդ և աղջուական հոգւստ, ինչպէս կը նամ փոխել քու անզուղական մտերմութիւնդ Աալոյացին կեղծ հրապոյրներուն: Եկուր իմ բաղկացս մէջ, ու իմ հոգիս, համբուրէ զիս:

— Ահա համբոյր մը, կրկնեց ասպետը, որ մահը Ճաշակելու ոյժ պիտի առ ինձ:

— Եկու հիմա հետո, Յուլիան, եկու միատեղ երթանք մեռնինք:

Պատոնէշներուն փոքր գրան առջին աս բոսէին ոտնաքայլի մը ձայնը կը լսուի:

“ Ի՞նչ ձայն է ան, ըստ կոմսուհին արտոքան ինքովնը պահէ վարագութիւն ետին, ես առնարար կը գիմաւորեմ մահը”:

Վարդարիս վաղելով զալով սենեակը կը մըտնէ. “ Ցնծութիւն, տիկին, չեմ զ իտեր ինչ պատահացաւ, զինուորները մեկնեցան. աղեղնաւորները ամրոցը թողուցին. գոները բացուեցան:

— Փախչինք ուրեմն, զոչեց կոմսուհին Յուլիանին”, որ իր պահուած տեղէն գուրս կ'ելլէր:

Լոիկ և փայլակի արագութեամբ միատեղ վարիչան, և վաղելով փոքր գրան առջեւ հասան, միշտ:

նակ մէկ զինուոր մը կ'ըսպասէր հօն իբրեւ պահանորդ, որ ամենեին ընդգիմութիւն չընելով, յարդանօք բարեւեց կոմսուհոյն անոր անցնելու ատենը: Ուղղակի զետեղերը երթալով, նոյն ճամբով հասան մինչեւ արքունական սրալատը: Կոմսուհին մէկ խօսքը իբրենց անցագիրն էր: Ձագուհին ներկայանալով անոր սոքը ինկաւ, ու անոր պաշտպանութիւնը խնդրեց: “ Աշխարհակալ տիրուհի, ըստ անոր, պաշտպանէ հարստահարեալ կին մը, որուն կեանքը և երջանկութիւնը սպառնցեալ է, փրկէ և աղատէ զիս Տարմէնակին շղթաներէն, և հաճէ ինձ աղատութիւն չնորհէլու:

— Արէ, ոտք եւ, աղնիւ տիկին, որատասխանէց Իզապէլ թագուհին քաղցրութեամբ, և մի վախնար: Տարմէնակ անզօր է ացոօր: ան աղջուտամբաց դաւաճանութեան մէջ բոնուեցաւ, և արքայական խորհրդարանը իւր իշխանութենէն մերկացուց և զինքը բանտարկեց, ուր որ անել պիտի մնայ մինչեւ իր մահը”:

Յուլիան Տըմօնիթէսպան և Յօղէլիա ոը Գարվէլլա զոհ սիրառվ և ուրախութեամբ դուրս ելան և իրենց ամուսնութեան արարողութիւնը կատարեցին մեծ հանգէսով: ’ի ներկայութեան թագաւորին, թագուհոյն և բոլոր արքունական աւագանի աղնուականց և տիկինանց:

Յագուստ իշխանական բարձր պաշտօն մը շընորհէց Յուլիանին:

Իսկ Աալոյացի Կարոլոս, որուն համար Յօղէլիա իր անձը վատանդի մէջ գրեր էր, Տարմէնակին անկման և Ճակատազ բին մասնակից եղաւ, քանզի ան ալ գաւաճաններէն մէկն էր:

## ՀԵՐԱԿՈՒՄ ԸՆԿԵՐՈՒՄ

ՎԵՆԵՏԻԿԻ ՎԵՐԱԲԵՐԵԿԱՆ

Վարունակութիւն (1)

Կերիս: Զեր հայրն առաքինի մարդ մ'էր, ու սուրբ մարդիք, մեռնելու տաեն. Վասուածային աղեղցութիւն մը կ'ունենան, անոր համար, չերկրայիք որ այն վիճակահանութիւնը՝ որ սոկիի, արծաթի, ու կապարի երեք սնառուկներուն մէջ զետեղեց (որոնցմէ ով որ մէկը կ'ընորէ, ձեզ ընտրած կ'ըլլայ) ձեր աստիճանին վայլած մարդէմը չեպիս ընտրուի, այլ այնպէս մէկէ մ'որ սրտերնիդ հետը կապուած է: Բայց ձեր սիրոյն համար ար-



Ճամբայ տայ :

Կերիսա . Առաքերնիդ կու դայ , տիկին , որ ձեր հօր կենդանութեան ժամանակը , հոս վենե . ակիցի զենուորական աշակերտ մը եկաւ , Առօնթփեռաթի Արագեղին ընկերութեալրը :

Փօրթիս . Այս , այս . Պատանիօն , անանկ չէ , կարծեմ աս եր անունը :

Կերիսա . Ճշմարիտ կ'ըսեմ , տիկին , որ իմ խենթ աչքերուու պահ բոլոր մարդոցնէ աւելի՝ գեղեցիկ օրիորդ մ'առնելու արժանաւորագոյնն է :

Փօրթիս . Միտք աղէկ կու դայ կոր , ու կը յիշեմ զենք որ զովութեան ամենէ , արժանաւորն է , ինչու , ինչ կայ որ , նոր լուր մ'ունիս :

Օամայ ճը կը ճոնէ :

Օամայ . Տիկին , չըս օտարականները՝ հըրամանքնիդ կ'ուզեն կար , որ հրաժարական հրաման - առնեն ձեղմէ . ու հիմակ ալ հինգերորդէ մը պատգամաւոր մ'եկաւ , լուր - բերելուլ Արագեի իշխանէն՝ որ այս գիշեր , իւր տէրը , իշխանը հոս պիտի դայ :

Փօրթիս . Ուէ որ այնքան բարի սրտով հինգերորդին ընդունելութիւն տամ , որքան բարեսըրտութեամբ միւս չորսը պիտի Ճամբեմ , անոր գալուն վրայ ուրախ - ըլլամ պիտի . բայց թէ որ սուրբի վարմունք ունի , ու սատանայի մը կերպարանք՝ աւելի աղէկ է որ խոստովանի քան թէ ինձի հետ կարգուի : Վալէ երթանք , Երիսա , Դուն շնւա ըրէ , առջեն դնա : — Ուստաւորին մէկին վրայ դուռը զոցած - չիդոցած , մէկ ուրիշը կու դայ դուռը կը զարնէ :

Վեւեն :

ՏԵՍԱՐԱՆ գ .

Վեւետիկ . Հասարակաց հրադարակ մը :

Պատաստու և Շքեւօք իւ ճոնէ :

Վայոր . Երեք հազար տուքաթ , բարի :

Պատանիօ . Եյ , աղաս , երեք ամսուան :

Վայոր . Երեք ամսուան , բարի :

Պատանիօ . Որուն համար , ինչպէս որ ըսի , Անթօնիօն երաշխաւոր է :

Վայոր . Անթօնիօն երաշխաւոր պիտ՝ ըլլայ , բարի :

Պատանիօ . Ինձի երախտիք մը կ'ընէք : Ինձի շնորհք մը կ'ընէք : Զեր պատասխանը կը նամի դիտնալ :

Վայոր . Երեք հազար տուքաթ՝ երեք ամսուան՝ ու Անթօնիօն երաշխաւոր :

Պատանիօ . Զեր պատասխանը ասո՞ր :

Վայոր . Անթօնիօն աղէկ մարդ մ'է :

Պատանիօ . Իրեն դէմ սուտ չարախօսութիւն մը լսամծ էք :

Վայոր . Ո՛չ , չէ , չէ , չէ , չէ , — իմ , աղէկ մարդ մ'է ըսելովս ի՞նչ ըսել կ'ուզէի դիտէք , իմ միաբու ձեղի հասկցունեմ , որ այն բաւական է . թէ և իր ինչքն երեակայութեամբք հասատուած է , մեծ նաւ մ'ունի , որ Տրիպոլիս կ'երթայ կոր , ուրիշ մ'ալ՝ հնդկաստան , ասկէց զատ Ոիալթօ (1) եղած ատենս ալ լսեցի , որ երրորդ մ'ալ Անեքսիկոն է , ու չորրորդ մ'Անդղիա պիտ՝ երթայ , ու գրակը ցրուած հարսաւութիւնները պինտ շատ են . բայց նաւ ըսածդդ ի՞նչ է տախտակ , նաւաստիք ի՞նչ են՝ մարդ , ցամաքի մուկ ալ կայ՝ ջրի մուկ ալ , ծովու աւաղակ ալ կը լսայ՝ ցամաքի աւաղակ ալ , այսինքն ասպատակ ըսել կ'ուզէմ , անկէ ետք , ծովու , հողմի , ու աղասածներու վատանգներ կ'ըլլան : Արգս՝ ասոնք ամենը մէկ - դի , բաւական է , երեք հաղարա առքաթ , կ'արծեմ , պէտք է որ իրմէ մուրհակ առնենմ :


Պատանիօ . Հաւասար եղիք որ կ'առնէք :

Վայոր . Հաւասար ըլլալս , ու ըլլալս : և թէ հաւասար ըլլալիքս կամ չըլլալիքս , ան իմ զիտնալու բանս է , կրնամ՝ Անթօնիօյի հետ տեսնուիլ :

Պատանիօ . Ուէ որ կը հաճիք որ մեզի հետ ճաշէք :

Վայոր . Հրամնըէք , որ խոզի միս հոտիմ , այն անէն ուտեմ՝ որու մէջ ձեր Այազովքեցի մարզարէն աստանային երգում ձղից որ մէջը բնակի , ես ձեղի հետ կը զնեմ , ձեղի հետ կը ծախեմ , ձեղի հետ կը խօսիմ , ձեղի հետ կը պըտըտիմ , և այլն , և այլն , բայց ձեզի հետ կերակուր չեմ ու տեր , ձեզի հետ չեմ խներ , և ոչ ձեզի հետ ազօթք կ'ընեմ : Ի՞նչ նոր լուր կայ Ոիալթօյէ : — Ո՞ւ է այն եկաղը :

### ԱՐՈՒԵՍՏ



ՖՈԹՈՐԱՅԻՆԻ

Հետեւալ համառօտ դրութիւնը նոր սկսող ներուն համար է , որով աս զեղեցիկ արհեստը առանց նեղութեան ու ժամանակ կորսնցնելու գործա-

(1) Վաճառականոց խմբանոցը .



ըերրորդ ալ հանելէդ ետքը՝ վրայի հեղանիւթը ցամքելուն պէս, մութ շրջանակին մէջը անցուր : Հինգ բռպէէն աւելի ատեն անցունելու չնորդաղանիքէն ապակին հանելուդ ու ստուերասենեակը դնելուդ միջոցը, քանզի չորնալու ըլլայ նէ իր զգացողութիւնը շատ կը տկարանայ :

Վրծաթ բաղանիքը քանի որ կը դործածես, պէտք է որ միշտ որոշեալ բարձրութեան մը լեցուած պահես դործելէդ առաջ. եթէ ոչ երկար ժամանակ զործածելու կը տկարանայ, և մաքուր պատկեր չառներ :

Իիչ մը ատեն գործածուած արծաթ լուծմունքը նոր լուծմունքէն աղէկ կը դործուի, քանզի միշտ չօլօդինի մաշկը կը խանգարէ զնորը. ասիկա արզիլելու համար՝ առաջին անգամ, զործածելէդ քսան և չորս ժամ առաջ քիչ մը չօլօդինի մափելու է արծաթ բաղանիքին մէջ, և թաւղթէ անցունելու է :

Բաղանիքը ամէն առաւօտ թղթէ անցունելու է. եթէ ոչ պատկերին վրայ սե կէտեր աիտի երկնայ :

(Ո՞նայեալը յաջրու լուսուն:)

## ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱԲԱՋՆԵՐ

Քեզ շնասոց ի՞նչուս դատմէզու և

“Եսր Եսրք քաղաքին մէջ, պատուաւոր սևամորդ պառաւ տիկին մը՝ ծխախոտը քարշելով փողոցէ մի կանցնէր. արքեալ նաւալար մը կինը հրելով ու բերնի ծխախոտի կաւէ խողովակին զարկաւ. ու չեռուանց սկսեց իր տուած վնասին վրայ ինդալ, բայց կինը երբէք վրէժինդրութիւն մը չի ցուցնէլով ծռելով, դետնէն առաւ անոր կոտորները, ու դթալիր և տրամութեամբ մի ըստ . “ Աստուած թողութիւն չնորհէ ինչպէս որ ես կը չնորհէմ ”. բիրա նաւաստիին կարծրացեալ սրտին անանկ դպաւ կնկան տա վարմունքը որ ամցաւ և իր սրտէն դատապարատուելով զղաց, աչքերէն արտասուքը վաղելով իր յանցանքը սրտով խոստովանեցաւ, և քսակը բանալով՝ բոլոր ունեցած ստակը կնկան տալով. ըստ, “ Ամենակարողը օրէնէ քեզ, դորովագութ մայր, ասկէց ետքը մէյթան ասանկ երբէք դործ մի չի պիտի ընեմ ”:

## ԵՐԿՐԸԳՈՒՆՏԻՄ ՎՐԱՅ

### ՅՈՒՅԹ ՇՐՈՎԵՐՈՒՄ ԶԵՓԻ

Խաղաղական Ովկիանոս եօթանասուն և ութը միլեօն քառակուսի մկան է, Եղլանտեան Ովկիանոսը քսան և հինգ միլեօն, Հնդկաց Ովկիանոսը՝ տասն և չորս միլեօն, Հարաւային Ովկիանոսը՝ մինչեւ 30 աստիճան՝ քսան և հինգ միլեօն, Հիւսիսային Ովկիանոսը՝ հինգ միլեօն, Միջերկրականը՝ մէկ միլեօն, Աև Օսմլը՝ հարիւր եօթանասուն հազար, Պալթիկ հարիւր եօթանասուն և հինգ հազար, Հիւսիսային Օսմլը՝ վայխուն հազար :

## ԵԹ ՀԵՄՍ ՊԵՏԵՍՈՒԾԵՒՄ

Տ. Յ. Դ. Զմիւռնիս. Պատառքան (1) :

Ս. Ս. Զմիւռնիս. Հետեւ եալ թու յի մէջ պատեմի գանձնի մի. Ա. Զմիւռնիս. Չեմք կրնար արդի ընթացքներ փախել. Եթէ շատերը ուղելու լլան նէ երկրորդ շրջան կը թաղանց ասիկա :

### ՅՈՒՅԹ ԵՐԱՅ

Յունատ 19. Տիկին գետորդ սիրիակիւ Յ. Գրիգորեան. էգ. 22. Տիկին Առլըն երկան Յանձնական. էգ. 30. Տիկին Սարգիս ազա Առմիլեան. արու .

## ԱՄԱՒՅՆՈՒՅՆ ԹԻՒՅՆ

Յուն. 21. Ի Սուրբ Ստեփանոս ձեռամբ Տէր Գեղորգ քահանայի որիսորդ Տիկոնիկիստ Պատիզանական. էգ. Յուն. 22. Պատիզան Երևան երկան Յանձնական. էգ.

## ՄԵՀՅ

Յուն. 22. Պիթլիզի Մակա Յանձնական :

” 26. Յունիս ազա Յանձնական :

## ՅԱԿԱՆԻՑ ՅԱՎԱՐԱՐ

Դաստիարակութեան կամ վաճառականութեան յարմար Յունատէտ և Գաղղիապէտ երիտասարդ մի կայ, եթէ մէկը կը կարօտի՝ Յաւերծահարսէն կը նայ իմանալ :

Դաստիարակութեան մասին քաջ Հայկարան է, և վաճառականութեան համար ալ տեարակ բըլ նել ու զրադիտութիւն ընել դիտէ :

Փաքը ստուերասենեակ մը կայ ծախու, ով որ կ'ուզէ՝ Յաւերծահարսէն կրնայ իմանալ :

## ՏՆՈՐԵՆ ԵՒ ԽՄԲԱԳԻՐ ՄԱՐԳԻՍ ՓԵՓԱԶԵՄ

### ՅՈՒՅԹ ԵՐԱՅ

Ի ՏՊԱՐԱՆ ՏԵՏԵ